ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«30» 05 2024թ.
№ ՊՆՊ-Գկվ/-800

«Կասա Կառուցապատում» ՍՊԸ (ՀՎՀՀ 07623477) տնօրեն
Մ. Ջիլավյանին
հասցե՝ Հաղթանակ բնակավայր, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք /տ/3/
Նոյեմբերյան 4101 Տավուշ Հայաստան
հեռ. 091-89-96-11

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/9» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «Կասա Կառուցապատում» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն): Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) Ընկերությունը հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի իրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 05.04.2024թ. կնքվել է ապրանքի մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-10/9-6 ծածկագրով գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ Ընկերության տնօրեն Մարտին Վարդանի Ջիլավյանը 2022թ. հոկտեմբերի 25-ից մինչև օրս հանդիսանում է նաև «Ֆոռտունա 4» ՍՊ ընկերութան տնօրեն, իսկ «Ֆոռտունա 4» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ 07624927) 2022թ. հունիսի 10-ից մինչև 2024թ. հունիսի 10-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն՝ Ընկերության և «Ֆոռտունա 4» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 05.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/9-6 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. մայիսի 29-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է նշված պայմանագիրը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 138,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. հունիսի 5-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 138,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2024թ. հունիսի 5-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2068 սենյակ:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 05.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/9-6 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով «Դուռ երկաթյա 1*2մ» ձեռքբերելու դեպքում Ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ